«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Դաստիարակ՝ Գեղեցիկ Սարգսյան

Մանկապարտեզ՝ Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի ՀՈԱԿ մանկապարտեզ

2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 6
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 6
1.1. ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 7
1.2. ԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԺԵՔԸ 8
1.3. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 8
ԳԼՈՒԽ 2 11
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ 11
ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախ՝ երեխային սիրել, հետո՝ դաստիարակել եւ ուսուցանել:

Երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին ինքը կա:

Ընդունել երեխայի սխալվելու իրավունքը:

Օգնել երեխային՝ գործել ինքնուրույն:

Ճանաչել նրա անձը եւ կատարելագործել:

Հովհ. Շիրազ

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է: Ինտեգրված պարապմունքի միջոցով արտահայտում ենք միջառարկայական կապերը: Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:[1]

Ինտեգրված պարապմունքների միջոցով բազմակողմանի գիտելիքներ են ստանում, հետաքրքիր և բովանդակալից են դարձնում ուսումնական գործընթացը, և այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական աշխատանքներ: Փորձը ցույց է տալիս, որ այդ պարապմունքների արդյունավետությունը բավականին բարձր է: Ինտեգրված պարապմունքները հզոր խթան են հանդիսանում երեխայի հոգեկան գործունեությունում: Երեխաները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել: Եթե միանման պարապմունքների ընթացքում երեխաները ձանձրանում էին, ապա այս դեպքում պարապմունքն առաջացնում է հետաքրքրություն, աշխուժություն: Ինտեգրված պարապմունքները հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու

[1] Յ. Ա. Կոմենսկի, «Մեծ դիդակտիկա», էջ՝ 168-169:

հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծագործական ունակությունը, հետազոտական աշխատանքը:

Մեր նպատակն է երեխային ուղղորդել, սովորեցնել, հետազոտել, ստեղծագործել, որոնել, պարապմունքը յուրացնել հետաքրքիր մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված պարապմունքը դառնում է նաև գրավիչ դերախաղ, քննարկում, ոչ թե գիտելիքների մեծ պաշարի հաղորդում: Ինտեգրված պարապմունքը սովորաբար նախապես պլանավորվում է: Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին: Հաճախ դրանք պարապմունքներ են՝ ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման: Երեխաներին մեծ հաճույք է պատճառում պարապմունքների ընթացքում համակարգչով կամ հեռուստացույցով ինչ-որ մի դրվագի դիտումը, նկարաշարքի դասավորումը. դա շատ ավելի արդյունավետ է լինում ինտեգրված պարապմունքների ընթացքում:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքները պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանություն ուսուցման բոլոր փուլերում: Սա նպաստում է համահավաք, կենտրոնացված ծրագրային նյութի յուրացմանը՝ փոխգործուն աշխատանքների կիրառմամբ: Ընտրելով ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում կարծում ենք, որ ինտեգրված պարապմունքները երեխային տալիս են բավականին լայն ու վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, ուր նա իրապես ապրում է, փոխհարաբերությունների մեջ է երևույթների և առարկաների հետ, կապված է աշխարհում առկա բազմաթիվ նյութական ու գեղարվեստական մշակույթների հետ:

Հետազոտության **խնդիրն** է նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ինտեգրված պարապմունք կազմակերպելով սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը,

հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը, զարմանալու, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու սովորույթը: Առաջացնել հետաքրքրությունը ինտեգրված պարապմունքների նկատմամբ, որ հիմնված է երեխային կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում: Դրանք կառուցել մեկ ամբողջական գործունեության շրջանակում, ինչը կապահովի հսկայական տեղեկատվական դաշտ փոխադարձ ներթափանցմամբ և ընդհանրացմներով: Այսպիսի պարապմունքները երեխային տալիս են լայն պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության նյութ հանդիսացող ինտեգրված պարապմունքները կարողունակահեն են և վեր են հանում երեխայի կարողունակությունները: Իսկ կարողունակությունները անհատի ինտեգրալային (ներգրավված) համալիր բնութագրիչն է, այն գիտելիքների հմտությունների և արժեքների համակարգն է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու խնդիրները:

Ուսումնասիրության **նպատակն է** արդի մեթոդներով պարապմունքը ներկայացնել միջին խմբում: Այսպիսի պարապմունքները հնարավորություն են տալիս երեխային լինել մոտիվացված, հետաքրքրված: Պարապմունքը իրականացվում է մաքսիմալ արդյունավետ՝ տալով երեխային և՛ գիտելիք, և՛ հետաքրքրություն, և՛ առհասարակ ինքնադրսևորվելու հնարավորություն: Երեխաները կարող են ինքնուրույն ստեղծել օրվա պարապմունքն ավելի գունագեղ և հետաքրքիր տարբերակներով: Հնարավորություն է տալիս երեխային ավելի լավ յուրացնել թեման, համակարգել ստացած գիտելիքները, ինչպես նաև զարգացնել ստեղծագործական միտքը: Հետազոտական աշխատանքում ներկայացնում ենք ինտեգրված պարապմունք միջին խմբում: Ներկայացնում ենք ինտեգրված պարապմունքը, որպես ուսուցման կարևորագույն բաղադրիչ և գիտելիքների կառուցմանը, հմտությունների ու կարողունակությունների ձևավորմանը նպաստող գործոն:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ **ներածությունից**, **երկու գլխից**, **եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից**:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Վեր հանելով կարողունակությունները ինտեգրված պարապմունքների ընթացքում երեխայի մեջ.

- կհաստատվի երկխոսություն և համագործակցություն,
- կստեղծվի փոխըմբռման մթնոլորտ, որի արդյունքում ուսուցումը կկառուցվի ոչ թե ցուցադրումների և բացատրությունների, այլ ուսումնական գործունեության մեջ բոլոր երեխաների անմիջական ներգրավման միջոցով,
- աշխատանքային պլանը կկառուցվի երեխաների նախասիրությունների և հետաքրքրասիրությունների հիման վրա
- կխրախուսվի երեխայի ինքնուրույն փորձարարական գործունեությունը,
- ուսուցման ընթացքում շեշտը կդրվի երեխայի ինքնակառավարման կարողության զարգացման վրա,
- ուսուցումը կկազմակերպվի համագործակցային մթնոլորտում, որ և՛ երեխան, և՛ դաստիարակը նույն հարթության վրա կլինեն և հանդես կգան գործունեության սուբյեկտների դերում,
- դաստիարակը կլինի ուղղորդող, օգնական, խորհրդատու, ավագ ընկեր:

Այսպիսով ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կդառնա կարողունակահեն կրթական մատուցման ձև, որի միջոցով էլ կզարգանա երեխայի մեջ այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական

մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը, համագործակցությունը, հնարամտությունը, անձնական կարգապահությունը շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալումը, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալը: Քանի որ ժամանակակից մանկավարժության նպատակն է դաստիարակել, կրթել քննադատական միտք ունեցող, ինքնուրույն, բարձր պատասխանատվությամբ հասարակության անդամ, անհատ, որը կկարողանա համարձակ առաջ գնալ այն բոլոր մարտահրավերներին, որոնք ժամանակը մշտապես դնելու է իր առջև:

1.1. ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ինտեգրված պարապմունքը իրենից ներկայացնում է.

1. Հատուկ կազմակերպված պարապմունք: Այսինքն՝ եթե այն հատուկ կազմակերպված չէ, ապա կարող է ընդհանրապես գոյություն չունենալ կամ բաժանվել առանձին պարապմունքների, որոնք միավորված են ընդհանուր նպատակով:
2. Ուսումնական ծրագրերի բաժինների միջև տարբեր գիտելիքների լայն կիրառում, այսինքն՝ միջառարկայական կապերի խորը իրականացում: Ինտեգրված պարապմունքը հիմնված է միջառարկայական կապերի վրա.
    - ընդհանուր մանկավարժական՝ դիտարկելով որպես ուսումնասիրվող նյութին ինտեգրված մոտեցման պայման և միջոց,
    - մեթոդական՝ որպես ուսուցման ինտենսիվացման պայման և միջոց,
    - կազմակերպական՝ հիմնված կրթության ձևերի ընդհանրության և դաստիարակի և երեխայի փոխգործակցության բնույթի վրա օպտիմալ ձևերի ընտրության հարցում:

Ինտեգրված պարապմունքը պարապմունքի հատուկ տեսակ է, որի մեջ ներառվում է մեկ հասկացություն ուսուցման ժամանակ մի քանի բաղադրիչների միաժամանակյա ուսուցումը: Այդպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար բաղադրիչը, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և

օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքները կարող են միավորել ուսուցման ծրագրերի տարբեր բաժինների բաղադրիչներ և մեթոդներ: Կարելի է ինտեգրել բաղադրիչների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար բաղադրիչի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր բաղադրիչների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ բաղադրիչի բովանդակությունը:

1.2. ԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԺԵՔԸ

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են ինտեգրված ուսումնական ծրագրերի հետևյալ տեսակները.

- միջառարկայական,
- բազմառարկայական:

Որպես միավորող առանցք հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընդգրկում է մի քանի բաժիններ:

Տարբեր է նաև ինտեգրված պարապմունքների տևողությունը: Բայց հիմնականում օգտագործվում է երկու կամ երեք պարապմունք՝ միավորված մեկ պարապմունքի մեջ: Ցանկացած ինտեգրված պարապմունք նպատակ ունի դուրս գալու մեկ ոլորտի նեղ շրջանակներից: Այդպիսի պարապմունքների կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացությունները հստակեցնել հասկացությունը, ընդհանրացնել թեման, միավորել երեխայի փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

1.3. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնացվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր ոլորտներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորում են մեկ պարապմունքի մեջ, կազմում են համակարգ, որի մեջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է պարապմունքի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար:

Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում դաստիարակը որոշում է.

1. Ինտեգրված պարապմունքի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը:

2. Համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը:

3. Ինտեգրման ձևը:

4. Միավորող նյութերի միջև կապերի բնույթը:

5. Նյութի հաջորդականության կառուցվածքը:

6. Նյութի ներկայացման միջոցները:

7. Դերերի բաշխումը ինտեգրվող բաղադրիչների, դաստիարակների միջև:

Այսպիսով, ելնելով ինտեգրված պարապմունքի տեսակից դաստիարակը համատեղ կազմում է պարապմունքի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունը տարբեր ոլորտների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը՝ (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի ոլորտներ,

ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ ոլորտի, իսկ մյուսը դառնում է օժանդակ) կազմվում է պարապմունքի պլանը, որոշվում է պարապմունքի տևողությունը: Ինտեգրված պարապմունքի արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը պարապմունքի ճիշտ պլանավորումն է՝ կարևորելով ինտեգրված թեմատիկ միավորի նշանակությունը:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա երեխան: Վերջնարդյունքները ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Նախադպրոցական կրթության կարողունակություններն են.

1. Լեզվական և հաղորդակցական կարողունակություն,

2. Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,

3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,

5. Թվային և մեդիա կարողունակություն,

6. Մշակութային կարողունակություն,

7. Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն,

8. Տնտեսական կարողունակություն,

9. Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

Ի տարբերություն նախկին չափորոշիչի, որը հենվում էր մեկ առարկայի վրա, նորը հենվում է երեխայի կարողունակությունների վրա:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Ինտեգրված պարապմունքների կիրառման արդյունավետությունը ցույց տալու համար Ագարակաձորի մանկապարտեզի միջին խմբում իրականցրել ենք ինտեգրված պարապմունք Մեծություն թեմայով:

Խումբ՝ միջին

Տևողություն՝ 2 պարապմունք

Թեմա՝ Մեծություն /ինտեգրված՝ մաթեմատիկա, խոսքի զարգացում և կառուցողական/

Նպատակ՝

- Սովորեցնել ընտրել առարկան ըստ մեծության
- Դաստիարակել հասակակիցների հետ հաղորդակցվելու կարողություն
- Ճշտել և ամրապնդել երեխաների պատկերացումները մեծությունների մասին /մեծ, փոքր, միջին, երկար, կարճ/
- Ամրապնդել և խորացնել երեխաների գիտելիները թեմայի շուրջ
- Խթանել խաղային գործողություններին մասնակցելու կարողությունը

Դիդակտիկ նյութեր՝ թվանշաններ, տարբեր չափերի խաղալիքներ, նկարներ տարբեր չափերի, Երեք արջերի հեքիաթի նկարները, քարտեր, արջերի մեծ և փոքր խաղալիքներ:

Մեթոդներ՝ մտագրոհ, խմբային աշխատանք, զույգերով, համատեղ ընթերցանություն:

Ակնկալվող վերջնարդյունք՝

- Կսովորի ընտրել առարկան ըստ մեծության
- Կհաղորդակցվի հասակակիցների հետ
- Կհամեմատի առարկան
- Կամրապնդի և կխորացնի իր գիտելիքները մեծություն թեմայի շուրջ
- Կմասնակցի տարբեր խաղային գործողություններին:

Ընթացքը՝

Խթանման փուլ /3-5 րոպե/

Այս փուլում հարցերի միջոցով ամփոփում ենք նախորդ պարապմունքը: Այնուհետև մտագրոհի միջոցով փորձում ենք երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն ուսուցանվող թեմայի հանդեպ /ի՞նչ առարկաներ կան խմբասենյակում, ի՞նչ գիտենք դրանց մասին, առարկաներից որն ի՞նչ չափսի է/: Առաջարկում ենք խմբասենյակի աթոռները դասավորել իրար կողք և համեմատել:

-Աթոռներից ո՞րն է ամենամեծը, ո՞րն է ամենափոքրը / կարմիրն ամենամեծն է , դեղինը՝ միջին , կանաչը ամենափոքրն է/:

-Ձեր առջևում դրեք ամենամեծ աթոռը և շարունակեք համեմատել:

- Ո՞ր գույնն է ամենափոքրը/ կանաչը/:

-Որտե՞ղ դրեցիք ամենափոքր աթոռը/ դեղին աթոռի աջ կողմում/:

-Ո՞ր աթոռն է ամենամեծը/կարմիրը/:

-Ո՞ր չափի աթոռն է գտնվում կարմիրի և կանաչի միջև/ դեղինը/:

-Ի՞նչ չափերի աթոռների համեմատումներ կատարեցիք/ մեծ, միջին, փոքր/:

Իմաստի ընկալում/15 րոպե/

Այս փուլում ուսուցանվում է նոր նյութը: Այն իրագործում ենք հեքիաթի համատեղ ընթերցանության միջոցով: Կարդում ենք ռուսական հեքիաթ Լև Տոլստոյի,,Երեք արջի հեքիաթը,,:

Երեխաներին ասում ենք , որ միասին ընթերցելու ենք մի գիրք: Նախ ցույց ենք տալիս գրքի կազմը և առաջարկում զույգերով քննարկեն : Անպայման ժամանակ ենք տալիս և նշում ենք ժամանակը ՝ 3 րոպե մտածելու համար: Ժամանակը լրանալուց հետո հարցնում ենք , թե ինչի մասին է գիրքը: Հարցը խթանում է երեխաներին մտածելու և հաճույքով լսելու պատմությունը: Տալիս ենք այնպիսի հարցեր , որոնք հստակ են, նպատակաուղղված: Գրի ենք առնում երեխաների պատասխանները ՝ կողքը գրելով

անունը: Հեքիաթը կարդում ենք դանդաղ , առոգանությամբ, ցուցադրելով նկարները այնպես , որ բոլորը տեսնեն:

Կշռադատման փուլ /15 րոպե/

Հարցերի միջոցով քննարկում ենք, թե ինչ իմացանք:
-Ինչու՞ է մեծ արջը նստում մեծ աթոռին, փոքրը ՝փոքրին:
-Արդյոք այն հիշեցրեց որևէ դեպք իրենց կյանքից:
-Ինչո՞վ են տարբերվում արջերը/ չափսերով/:

Քանի որ ուսուցման գործընթացում արդյունավետ է քարտերով կատարվող աշխատանքը, սեղաններին ենք դնում տարբեր չափսերի և գույների երկրաչափական պատկերների նկարներով քարտեր և նույն պատկերներից առանձին կտրտած: Երեխաները համադրում, համեմատում, գտնում են իրենց ծանոթ պատկերները: Նաև խաղի ընթացքում զարգացնում են իրենց բանավոր խոսքը՝ / Կարմիր եռանկյունն ավելի մեծ է , քան կանաչը, դեղին շրջանը փոքր է կապույտից: Այս սև քառակուսին մեծ է , իսկ վարդագույնը՝ փոքր/:

Խաղ՝ ,,Ո՞վ է առաջինը,,

Երեխաները պետք է կանգնեն ըստ հասակի: Առաջինը պետք է ավելի փոքր լինի երկրորդից, իսկ երկրորդը ավելի փոքր՝ երրորդից: Ի՞նչ հասակ ունի առաջին երեխան: Իսկ երկրո՞րդը… Հետո երեխաները շարք են կազմում հասակների աճման և նվազման կարգով: Անհրաժեշտ է , որ հասկանան ու տեղին օգտագործեն ,,աջից ձախ,, , ,,վերև,, , ,,ներքև,, ,տակ-վրա,, , ,,առաջ-հետև,, բառերը:

Հաջորդ պարապմունքի /**կառուցողական**/ ընթացքում էլ ավելի ենք ամրապնդում երեխաների գիտելիքները:

Թեմա՝ ,,Բազմոցներ արջուկների համար,,

Նպատակը՝

- Ծանոթացնել մի քանի մասերից կազմված առարկաներ կառուցելու եղանակներին
- Ամրապնդել առարկաների տարբերակումն ըստ չափերի՝ մեծ , միջին , փոքր

- Ամրակայել երկրաչափական պատկերների վերաբերյալ գիտելիքները
- Սովորեցնել ստացված կառույցով կազմակերպել թատերականացված խաղ:

Անհրաժեշտ պարագաներ՝ կառուցողական նյութեր, երկրաչափական մարմիններ՝ ուղղանկյուն, խորանարդ, քառակուսի,մեծ, միջին և փոքր չափերի խաղալիք արջուկներ, տիկնիկ:

Նախորդ պարապմունքի ընթացքում արդեն ,,Երեք արջի հեքիաթը,, ընթերցել ենք: Այս անգամ մի քանի հարց ենք ուղղում երեխաներին.

-Ու՞մ էր պատկանում ամենամեծ սեղանը, աթոռը և մահճակալը:

-Միջին աթոռի վրա ո՞ր արջուկն էր նստում:

-Փոքրիկ աղջկան ո՞ր մահճակալն էր ավելի հարմար:

Երեխաներին ասում ենք, որ հեքիաթի հերոսները այսօր մեր հյուրն են և հարկավոր է նրանց անակնկալ մատուցել: Լավ կլինի , որ նրանց համար մեծ, միջին և փոքր բազմոցներ պատրաստենք:

Աշխատանքի ընթացքում բացատրում ենք բազմոցի ստացման ձևն ու աշխատանքի հաջորդական քայլերը. Նախ պետք է ընտրել համապատասխան չափի նյութերը և դրանք ճիշտ դասավորել: Վերջում արջուկներին նստեցնում են բազմոցներին՝ տեսնելու համար , թե արդյոք հարմա՞ր է նրանց նստել: **Մատիկների-վարժանք.**

Մեր Արփին շիլա եփեց,

Շիլա եփեց և բաժանեց.

Սրա՛ն տվեց, նրա՛ն տվեց,

Սրա՛ն տվեց, նրա՛ն տվեց,

Էն պստիկի՛ն՝ չար բալիկի՛ն չտվեց:

Այդ պստիկը՝ չար բալիկը,

Անկարգ էր իրեն պահել

Ու իր ափսեն էր կոտրել:

Սկզբում երեխաներն իրենց ձեռքի ափի մեջ շրջաններ են գծում, ապա ծալում են մատները՝ արտասանելով բանաստեծության համապատասխան բառերը: ,,Էն պստիկին՝ չար բալիկին չտվեց,, տողն արտասանելուց հետո ճոճում են ճկույթիկը: Օրվա երկրորդ կեսին բեմականացնում ենք ,,Երեք արջի հեքիաթը,,:

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ Նախշուն Բեգլարյան. Դաստիարակը իրականացրեց ինտեգրված պարապմունք ըստ չափորոշչի, որի արդյունքում իրագործելով խնդիրները հասավ իր նպատակին: Դաստիարակը երեխաներին տվեց ոչ միայն գիտելիքներ, այլև կարողություններ, հմտություններ, արժեքային համակարգ ձևավորելու համար:Դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ երեխաները դրսևորում էին խոսքային ակտիվություն /լեզվական և հաղորդակցական կարողունակություն/: Կարողանում էին երևույթը դիտարկել տարբեր տեսանկյուններով, ընդհանուր պատկերով:Պարապմունքի ժամանակ երեխաները ակտիվ էին և հետաքրքրված պարապմունքի գործընթացով: Պարապմունքը միտված էր խոսքի զարգացմանը, ճանաչողական զարգացմանը, տարրական մաթեմատիկայի պատկերացումների զարգացմանը, կառուցողական հմտություններին:

Դաստիարակ՝ Թերեզա Մուսիկյան. Պարապմունքը շատ հետաքրքիր էր, և համապատասխանում էր նախադպրոցական կրթության պետական կրթական չափորորշչին: Ձևավորվեց համեմատելու, ընդհանրացնելու և եզրակացնելու կարողությունները: Պարապմունքի թեման բխում էր ծրագրային պահանջներից , նպատակները և խնդիրները հստակ ձևակերպված էին: Երեխաների նախկինում ձեռք բերված գիտելիքները օգնեցին իրագործել իրենց առջև դրված խնդիրները: Դաստիարակի կողմից տրվող առաջադրանքները հստակ էին: Պարապմունքն ընթացավ ճիշտ կառուցվածքով: Երեխաները ակտիվ էին, տիրում էր ուրախ և ջերմ մթնոլորտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ինտեգրված ուսուցումը նախադպրոցական կրթության ոլորտում շատ կարևոր դեր է խաղում, քանի որ շեշտը դրվում է կարողունակահեն կրթության վրա: Քանի որ կարողունակությունները երեխայի կողմից ուսումնառության և դաստիարակութան ընթացքում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են, նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակություններրը ձևավորվում են ուսուցման և դաստիարակության միջոցով:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա այս տարիքի երեխան: Վերջնարդյունքները ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Հետազոտության ընթացքում եկանք այն եզրահանգման, որ ինտեգրված պարապմունքները նպաստում են երեխաների միջև խաղային և խոսքային փոխհարաբերությունների կայացմանը, ինչպես նաև հիշողության, իմացական և հուզական ոլորտների զարգացմանը: Ինտեգրված պարապմունքներն ապահովում են երեխայի ներդաշնակ զարագացումը և ապահովում ուրախ, աշխույժ մթնոլորտ: Նման մթնոլորտ երեխաներին վստահություն է ներշնչում արդեն իսկ ձեռք բերած գիտելիքները հմտորեն կիրառելու համար: Ինտեգրված պարապմունքը ցուց տվեց, որ երեխաները ավելի հեշտ և արագ են յուրացնում թեման: Ինտեգրված պարապմունքի ընթացքում տարբեր մեթոդիկաների միջև կապերի բացահայտումը նպաստեց առարկաների և երևույթների ուսումնասիրությանը: Ինտեգրված պարապմունքը տվեց իր ակնկալվող վերջնարդյունքը ավանդական և փոխներգործուն մեթոդների համադրումով , խաղային տեխնոլոգիաների կիրառման, պարապմունքի ճիշտ նպատակների սահմանման միջոցով:Այս ամենի շնորհիվ ապահովում ենք վերջնարդույնքները և դրանից բխող ինը առանցքային կարողունակությունները:

Դա է պատճառը, որ չափազանց կարևորում ենք ինտեգրված պարապմունքների դերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում / ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար/ 2003:
- Խոսքի զարգացման պարապմունքները, մանկապարտեզի միջին խմբում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան ,2013:
- Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ /ձեռնարկ ուսուցիչների համար/ 2004:
- Կերպարվեստի պարապմունքներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Լ. Սմբատյան,Լ. Վերդյան, Լ. Սարգսյան, Երևան 2015:
- Մաթեմատիկայի իմ այբուբենը, ուսումնամեթոդական ձեռնարկ, մաս առաջին, Երևան, 2007:
- Նախադպրոցական կրթության պետական Չափորոշիչ , Հավելված ՀՀ Կառավարության 2021թ.-ի մայիսի 13-ի № 744-Ն որոշման /2021/:
- Նախադպրոցական կրթության ծրագիր միջին խումբ /4-5 տարեկաններ/:
- Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2014: